

զաքին վրայ, յանկարծակի զբաւելով: Իրեն կը միանան բազմաթիւ արարներ: Վերջապէս Յունիս Դին Գահիրէ լուր կը հասնի որ Եւրպուզա գետին մէջ խեղդուած է եւ գէժքը ձուկերուն կեր ըլլալուն համար՝ անճանաչելի եղած է: Եւրպուզայի սպառնալիք ընելը անտարակոյս 15 օրէն աւելի տեսեց. անոր սպստամբութիւնը Մարտ 7էն մինչեւ իր մահուան լուրը Յունիս 7ը տեսեց: Վասիլ բան մը չ'ըսեր անոր մահուան մասին, այլ կ'ըսէ որ Եւրպուզա «մտաւ յիսրայելացեցն երկիրն, ու փրթաւ, որ չկարդին իր ուժ այնել»:

Վասիլ կը պատմէ որ 1400ին Նոյեմբեր 18ին (ըստպիլ արտաք Ե (5) «Ելով Մարայ սուլտանն ի Շամրն ու երեկ Հասան Պուզայ սուլտանն յառ սուլտանն յառտայնին (պէտք է ըլլայ Ռեհտանեայ, կամ աւելի ձիւշա՝ ար-Ռեհտանեայ: Յ. Ք.) ու ասաց, որ Թամուրլանին առել է զՀալապ քաղաքն ու զբերզն, ու բռնել ցայտի սուլտանն, որ Դմըշխայ նայիպ էր»: Թաղրի Պիրտիի համաձայն Ռապի իւլ ախըր 3 ալիինքն Նոյեմբեր 19ին, Ասանպուզա, որ գործադիր քարտուղարն էր սուլթանին, Գահիրէ եկաւ լուր բերելով որ Թիմուրլէնի համաձայնելով Թիմուրլէնին հետ՝ զբաւեր է Հայկազը իր միջնարբերով, որուն բնակչութիւնը սրէ անցուցեր է կործանելով կամ ախոտի վերածելով մզկիթներ, եւայն: Նոյն այդ օրն է որ Սուլթան ան-Նասիր մեկնեցաւ Գահիրէէն եւ իր զօրքով բանակասեղեց ար-Ռեհտանեայ: Գեղտեմբեր 8ին Սուլթանը բանակեցաւ Կազա: Վասիլի յիշած Սայիտի սուլթանն Դամասկոսի (Դմըշխայ) փոխարքան էր, որ գերի բռնուած էր Լանկիթիմուրէն: Վասիլի յաջորդ տողերը ազճատ են եւ անորոշ, որով հոս չեմ արտագրեր: Ամէն պարագայի տակ, ան ցոյց կու տայ որ Սուլթանին զինուորական ոյժը այդ կողմերը խորտակուած էր («չմնաց սուլտանին հիծել»), եւ Թիմուր յառաջացաւ Դամասկոսի վրայ: Վասիլ կը վկայէ որ «Ի ԻԶ (26) ի նոյեմբ(ե)րն ելաւ սուլտանն ի ճամբահ, ու մտաւ կեցաւ ի Ղազէ Ը

(8) օր»: Արդարեւ Ռապի իւլ ախրի 8ին կամ Նոյեմբեր 26ին Ուրբաթ առաւօտուն սուլթանական յառաջապահները ճամբայ ելան դէպի Կազա, ուր միայն Ռապի իւլ ախրի 20ին, ալիինքն Գեղտեմբեր 8ին հասաւ ու բանակեցաւ Սուլթանը, գլխաւոր բանակով: Սուլթանը Կազայէն մեկնեցաւ Ռապի իւլ ախրի 24ին, ալիինքն Գեղտեմբեր 12ին, եւ Գեղտեմբեր 14ին բանակը մեկնեցաւ դէպի Դամասկոս, ուր հասաւ Գեղտեմբեր 23ին (Ճումատա իւլ էվէլ 6ին):

Ասկէ վերջ Վասիլ Մարաշխառ կը պատմէ իր անձնական փորձառութիւնը այս արշաւանքին մէջ: Կ'ըսէ որ «Ու ելաք ի ճամբահ երկուշարաթի յերեկուն, ես հասայ ի Քսուէ առ Թաղրիուերդին, որ Շամրու նայիպութիւնն առել էր ու քան զսուլտանն յառաջ Մարայ հիծելով կու երթին ի Դմըշխ չալիչ՝ Պայիպառուս ու Տունտազն ու Նավոզն եւ այլք»: Արդարեւ Թաղրի Պիրտի կը պատմէ որ իր հայրը Թաղրի Պիրտի մին Պաշապուզա աղ-Ձահիրի, որ էյթամիշի հետ ապստամբեցաւ Սուլթանին դէմ, իր քրոջ շնորհիւ, որ Սուլթանին մայրն էր, ազատեցաւ միւս ապստամբներուն բախտէն, եւ Գեղտեմբեր 8ին Սուլթանէն Դամասկոսի փոխարքայ նշանակուեցաւ, Դամասկոսի փոխարքան Սուլթանը Թիմուրլէն գերուած ըլլալուն համար: Թաղրի Պիրտիի դէմ, սակայն, չարախօսութիւն եղաւ, եւ լոկ իրր յառաջապահ Դամասկոս ճամբայ ելաւ Վասիլի Պայպառուսի, Տունտազի եւ Նավոզին հետ: Ասոնցմէ առաջինը Պայպարան է, որ Մեծ Գործադիր Քարտուղարն էր, Սուլթանին քրոջ որդին իսկ վերջինը Նօրուզ ալ-Հաֆիզին: Յունուար 8, 1401ին Սուլթան Ֆարահ փախաւ Դամասկոսէն քանի մը մամուլներով եւ զընաց Երպուսոս, իր բախտին լքելով Դամասկոսը: Վասիլ կը վկայէ որ «գիշերն 2 (6)-ն յունուարն, որ ուրբաթ լուսացաւ է (7) յունուարն փախաւ սուլտանն ու ամէն պարոնայքն»: Ան ուրեմն քիչ մը կը տարբերի: Վասիլ կը յիշէ որ Սուլթանէն առաջ Դամասկոսէն փախեր էր «Այշպակն